ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
16 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Տարոն Եփրեմյանը, Դավիթ Պապոյանը, Զարուհի Կարապետյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, համայնքի ղեկավարի գլխ.խորհրդական Վ.Չիլինգարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Ա.Խլղաթյանը, համայնքի ղեկավարի օգնական Ա.Գասպարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը և համայնքի վարչական ղեկավարները:

Նիստը վարում էր Չարենցավան համայնքի ղեկավար՝ Հակոբ Շահգալդյանը

ԼՍԵՑԻՆ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2) Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
3) Չարենցավան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
4) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 110–Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
5) Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
6) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքին Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամաս 19-րդ շենք թիվ 2 հասցեում գտնվող գրադարանի շենքի նվիրաբերությունն ընդունելու մասին:
7) Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու մասին:
8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

1. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՖՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

2. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
				Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
1	2	3	4	5	6	7
1.	ողի օտարումից մուտքեր		433147,337	0	147029,99	580177,327

/հազ. դրամ/

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
01			նդհանուր բնույթի անրային ծառայություններ այլ դասերին չպատկանող/	5113	18622,04	0	36840,93	105462,97
08			անգիստ, մշակույթ և կրոն այլ դասերին չպատկանող/	5111	0	0	8935.0	8935.0
				5113	41173,788	0	51254,06	92427,848

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Աշխատանքային քննարկումներ ծավալվեցին խաղադաշտերի, մայթերի վերանորոգման,ինչպես նաև նոր ծառեր տնկելու վերաբերյալ:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

ԼՍԵՑԻՆ

2. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՖՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Չարենցավան համայնքի ավագանին***որոշում է.***

1. ***ՉԱՐԵՆՑԱՎԱՆՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 29367.04 ՀԱՋ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
06	1	1	ակկոմ. շինարարություն	4521	0	26171.04	0	26171.04
08	6	1	անգիստ, մշակույթ և կրոն /այլ ասերին չպատկանող/	4819	0	500,0	0	500,0
09	1	1	ախադպրոցական կրթություն	4511	521521,0	726,0	0	522247,0
09	5	1	ոտադպրոցական կրթություն	4511	377147,0	1970.0	0	379117,0
11	1	2	Հ համայնքների պահուստային ֆոնդ	4891	251916,984	-29367,04	0	222549.944

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

ԼՍԵՑԻՆ

3. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՖՅԱՆ)

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 27.1 հոդվածի և 31-րդ հոդվածի 1.8 կետի Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն՝ ըստ գործառնական ոլորտների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

4.ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 110–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն Ա.Հովսեփյանի 22.05.2025թ. մտից 2809/04, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ա.Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Վ.Մարգարյանի 02.05.2025թ. մտից 2469/04, «Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Կ.Օհանյանի 26.05.2025թ. մտից 2842/04 և 27.05.2025թ. մտից 2854/04 գրությունները, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 110-Ա որոշման հավելված 7-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 13-րդ տողից հետո լրացնել նոր 14-րդ տողով, հետևյալ բովանդակությամբ՝

14.		Դաստիարակի օգնական,փոխարինող			1	121000			121000

2) «Ընդամենը» տողի 6-րդ սյունակում «16» թիվը փոխարինել «17» թվով, 10-րդ սյունակում «2103200» թիվը փոխարինել «2224200» թվով:

2. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 110-Ա որոշման հավելված 9-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 4-րդ տողի 6-րդ սյունակում «10» թիվը փոխարինել «11» թվով, 10-րդ սյունակի «1295000» թիվը փոխարինել «1424500» թվով,

2) 8-րդ տողից հետո լրացնել նոր 9-րդ տողով, հետևյալ բովանդակությամբ՝

9.		Դռնապան			1	121000			121000

3) «Ընդամենը» տողի 6-րդ սյունակում «17» թիվը փոխարինել «19» թվով, 10-րդ սյունակում «2275200» թիվը փոխարինել «2525700» թվով:

3. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 110-Ա որոշման հավելված 12-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 12-րդ տողի 6-րդ սյունակի «2» թիվը փոխարինել «3» թվով, 10-րդ սյունակի «242000» թիվը փոխարինել «363000» թվով,

2) «Ընդամենը» տողի 6-րդ սյունակում «72» թիվը փոխարինել «73» թվով, 10-րդ սյունակում «9169200» թիվը փոխարինել «9290200» թվով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

5. ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԲԵՆԻԿ ԲԱԼԲԱԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,Հողայինօրենսգրքի 66-րդհոդվածիպահանջներով, նկատիունենալով, որ 07-007-055-007 կադաստրային ծածկագրերով հողատարածքը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին. Զարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել ուղղակի վաճառքով՝ 78000 ՀՀ դրամ գումարով,օտարելու***Բաղդասար Մուրադյանին*** սեփականության իրավունքով պատկանող ք.Զարենցավան 2-րդ միկրոշրջան 2-րդ թաղամաս 24-րդ շենքի շրջակայքում գտնվողավտոտնակի զբաղեցրած 07-007-055-007 կադաստրային ծածկագրով՝ 26.0 քմ մակերեսով հողատարածքը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, կից ներկայացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականի պատճենը):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

ԼՍԵՑԻՆ

6. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 6-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 19-ՐԴ ՇԵՆՔ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԲԵՆԻԿ ԲԱԼԲԱԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 15.05.2025 թվականի «Գույքը նվիրաբերելու մասին» N 586-Ա որոշումը, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ընդունել Կոտայքի մարզի Չարենցավան համայնքին Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամաս 19-րդ շենք թիվ 2 հասցեում գտնվող, 65 466 710.00 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, 440.9քմ մակերեսով գրադարանի շենքի (անշարժ գույք նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N11112016-07-0059 վկայական) նվիրաբերությունը :
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

ԼՍԵՑԻՆ

7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱՍՈՒ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆՈՒՇ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ Տ.Սարուխանյանի, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ Ա.Մաթևոսյանի «Առաջարկություն՝ հայց ներկայացնելու վերաբերյալ» գրությունները, Չարենցավան համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքային շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցել իրավասու դատարան.

1) Անվավեր ճանաչել Չարենցավանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 626 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել՝ Արաիկ Վաչիկի Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն:

2) Անվավեր ճանաչել Չարենցավանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 702 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել Վաղարշակ Հակոբի Վարդանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն:

2.Լիազորել Չարենցավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալին Չարենցավան համայնքի ավագանու անունից կնքելու պայմանագիր փաստաբանական ծառայությունների մատուցման համար:

3.ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված լիազորություններով, բացառությամբ հաշտության համաձայնություն կնքելու լիազորության, փաստաբանին տալ լիազորագիր:

4. Չարենցավան համայնքի բյուջեից գումար հատկացնել փաստաբանական ծառայությունների մատուցման և դատական ծախսերի համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է բացասական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 0 դեմ-13 ձեռնպահ-11

Որոշումն չընդունվեց;

ԼՍԵՑԻՆ

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԵՎԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով , համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 49 որոշման, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի:

Հ/Հ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Բեջանովա Լիլիյա	3-19-26	15 900 000	Սեփականություն	Անհատույց

2. Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 **դեմ- 0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մալխասյան Նորիկ
Մակինյան Վարդան
Մուքայելյան Վալերի
Շահգալդյան Հակոբ
Պալյան Գարիկ
Պետրոսյան Ավետիք
Պողոսյան Մնացական
Սահակյան Գառնիկ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Նորիկ
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ